ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտ-առաջարկների վերաբերյալ հանրային քննարկման

Ք. Չարենցավան, 07.02.2025

Հանրային քննարկումը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանը: Հանրային քննարկման սկզբում Սևակ Վարդանյանը ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանդիպման նպատակը:

Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սաթենիկ Բալաբեկյանը ներկայացրեց ստացված առաջարկները, որոնցից յուրաքանչյուրի համար ակտիվ քննարկում ծավալվեց: Քննարկվեցին հատկապես այն առաջարկները, որոնք չեն ընդունվել հանձնաժողովի կողմից և չեն մտնելու քվեարկության փուլ: Այդ առաջարկներից մեկը՝ 8-րդը, «Կիրակնօրյա վարժարանի տարածքի վերանորոգում, երիտասարդական կենտրոնի հիմնումն» էր: Քննարկմանը ներկա էր Չարենցավանի հոգևոր հովիվ Տեր Համազասպ քահանա Հագեյանը, ով խոսեց ծրագրի կարևորության մասին: Նա նշեց, որ կենտրոնում փոքրերի համար կան տարբեր խմբակներ, և ներկայումս այստեղ սովորում է քառասունհինգ սան: Կենտրոնում ուսուցումն ամբողջությամբ անվճար է, և ծրագրի նպատակն է ընդլայնել կենտրոնի գործունեությունը: Համայնքի ղեկավարի տեղակալ Սևակ Վարդանյանը նշեց, որ քանզի տարածքը Հայ առաքելական եկեղեցունն է, հնարավոր է գործընթացի տարբեր փուլերում իրենք տեխնիկական խնդիրների հանդիպեն:

Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սաթենիկ Բալաբեկյանն առաջարկեց հերթականությամբ քննարկել ծրագրերը:

Առաջին ծրագիրը իրենից ներկայացնում է երրորդ թաղամասի լողավազանի և հարակից տարածքի բարեկարգում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է տարածքի կանաչապատում, ծառապատում, անվտանգ խաղահրապարակի հիմնում: Որպես լողավազանի արդյունավետ օգրագործում, առաջարկվում է դրա կեսը փակել, այն դարձնել ջրավազան, իսկ մյուս կեսը կանաչապատել:

Երկրորդը՝ Բառարանների և գրքերի խանութ ստեղծելու առաջարկն էր, որն ամբողջությամբ բիզնես ոլորտի է և չի համապատասխանում գործընթացի չափանիշներին:

Երրորդ ծրագիրը նախատեսում է երեխաների և պատանիների համար մանկական մարզական խաղահրապարակ 8-րդ թաղամասում:

Չորրորդ ծրագիրը առաջարկվել էր «Հեքիաթ» մանկապարտեզի ծնողների կողմից, որի շրջանակներում նախատեսվում էր տարածքի բարեկարգում և

կանաչապատում: Քանի որ այս ծրագիրը վերաբերում է միայն մեկ մանկապարտեզի և չի ենթադրում կապիտալ աշխատանքներ, քվեարկության չի ներկայացվի:

Հինգերորդ ծրագիրը վերաբերում է Չարենցավանի բոլոր ՀՈԱԿ-ներին՝ առաջարկելով դրանց անվտանգությունը ապահովել նորագույն տեխնոլոգիաներով՝ տեղադրելով դոմոֆոններ: Սա նույնպես կապիտալ ծրագիր չէ և բացի այդ, առայժմ դրա անհրաժեշտությունը չկա:

Վեցերորդ ծրագիրը իրենից ներկայացնում է Ալափարսի մշակույթի տան տանիքի հիմնանորոգում, որի վերաբերյալ ներկայացվեց մանրամասն պրեզենտացիա: Այս ծրագրի կարևորությունը կայանում է նրանում, որ տանիքը չվերանորոգելը հանգեցրել է վթարային իրավիճակների, մինչդեռ այստեղ խմբակներ և գրադարան է գործում

Յոթերորդ ծրագրով առաջարկվում էր բոլոր ՀՈԱԿ-ներում կառուցել ապաստարաններ, որը չի դրվելու քվեարկության, քանի որ համայնքում կան ապաստարաններ:

Իններորդ ծրագիրը առաջարկվել էր Չարենցավան համայնքի արցախցի բնակչի կողմից, ով ցանկանում էր հիմնել գորգագործության և կարպետագործության դպրոց:

Տասներորդ ծրագիրը նախատեսում էր Բջնիում կառուցել բազմաֆունկցիոնալ խաղահրապարակ:

Տասնմեկերորդ ծրագրով Համբարձում Սաֆարյանը առաջարկում էր Բջնի գյուղում ռոբոտաշինության կենտրոն հիմնել: Սակայն այս ծրագիրը քվեարկության չի դրվի, քանի որ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանն ասաց, որ դա ավելի քիչ բյուջե պահանջող ծրագիր է և հետագայում համապատասխան մասնագետների հետ համաձայնեցնելուց հետո համայնքապետարանը կիրականացնի:

Տասներկուերորդ ծրագիրը նախատեսում էր թեքահարթակների տեղադրում համայնքի մայթերին, սակայն համապատասխան մասնագետներն ասացին, որ ճանապարհները վերանորոգելուց հետո բոլոր մայթերն ունենալու են այդ թեքահարթակային ենթակառուցվածքները: Այսպիսով այս ծրագիրը նույնպես չի դրվի քվեարկության:

Տասներեքերորդ ծրագրի անվանումն է «Նորարար գրադարան», որի նպատակն է Չարենցավանի քաղաքային գրադարանի գրքային ֆոնդի հատվածի վերանորոգումը:

Եվ վերջին՝ տասնչորսերորդ ծրագրի նպատակն է 9-րդ և 10-րդ թաղամասերի ճանապարհների հիմնանորոգում:

Նշվեց, որ քվեարկել կարող են 16 տարեկանից բարձր բնակիչները: Քվեարկությունը լինելու է կայքում մուտք գործելու միջոցով, և յուրաքանչյուր բնակիչ կարող է քվեարկել առավելագույնը երեք ծրագրի օգտին: Քվեարկությունը կտևի մինչև փետրվարի 28-ը:

Արձանագրող՝

Սաթենիկ Բալաբեկյան